

զակում յիշված է նաև, որ Ասորպատականի թեմի առաջնորդ ընտրող ժողովին նախագահելու է Մելիք Թանգան վարդապետը։

Որչափ կարողացայ հասկանալ հայր սուրբի խոսակցութիւնից, կամենում է ինքը ոչ թէ պատգամաւորական ժողովը լուծված ձանաչել և նոր ընտրութիւն կատարել տայ, այլ եղած անդամներին օրինաւոր համարել և պակասի ընտրութեամբ զբաղվել՝ պատճառ բերելով ժամանակի սցուծիւնը։ Եթէ սակայն ձօնոց ծանօթ լինի հայր սուրբը ժողովի անցնել անպտուղ գործունէութեանը և կազմի՝ անդործունեայ անդամներից բաղկանալուն, առանց այլևայլութեան կը ձեռնարկէ նոր ընտրութեան նոր ու բարձրուն անձինք ընտրել տալով։ Մինեռոյն բանն էինքր սանու նաև թեմական խորհրդի համար։

Մտերմորդ ենք տալիս հայր Մելիք-Թանգանին լաւ ուսումնասիրել շրջապատը, առանց ալ ու անակ թիքվելու, գնալ ուղիղ ճանապարհով և հասնել ցանկալի նպատակին։ Ասորպատականի պէտք են մարդիկ, որոնք սրտացու լինեն ժամանակի կարիքներին և բնորոշն այսօրվայ օգտակարութիւնը նախարարութեան ու նրա զաւակների համար։

Միփեհարի Ազամը արեկեան շքով ու հետևորդներով փոխ այցելութիւն տուցեց երկու օր առաջ՝ հրապարտութեան, իր ետևից ունենալով 4-300 ձիաւոր զինուոր։

Սալմաստում գիւղատեղի հաշի Թաղիի հարցը դեռ բաւարար լուծում չը գտաւ։ Փոխանորդը մի գրութեամբ խնդրել էր Սալմայի գիւղացիներին իր ներկայութեանն հրաւիրել ու լսել նրանց բողոքը։ Նորին վսեմութիւնը իրօք որ տեսաւ գիւղացոց, լսեց նրանց պատճառաբանութիւնները և յայտնեց փոխանորդին, որ անպակաս բերել է տալու հաշի Թաղիին Թաւրիզ և քննութիւն կատարել տալու գիւղացոց ներկայութեամբ Միփեհարի կողմից հեռագրվել է արդէն յիշեց գիւղատեղի և Սալմաստի գաղափարներ։ Դիւղացոց կայելից դեռ մինչև հիմա մնացել են նոյն գրութեան մէջ՝ առանց հաշելու այն, որ շատերն արդէն ցանկ են և վարել աշխատանքները, մինչ արած մնացել են անգործ։

Ուրմիայում երկու հայ քահանաներ՝ Պօղոս քահանայ Տէր-Պետրոսեան և Դրիգորը Ե. Տէր-Սարգսեան իրանց գիւղերի ժողովրդի հետ ընդունել են ուսադաւանութեան կաթողիկոսը հրամայել իր առաջնորդական փոխանորդին, որ կատարութեան միջոցով երկու քահանաներին ուղարկեն Էջմիածին։ Փոխանորդն իր ժամանակին զրել էր Շուշու-ուղ-Դովլէին, որը իրտա հրամանագիր է ուղարկել Ուրմիայ, որ յիշեաներին ուղարկեն Թաւրիզ, որտեղից կուղարկեն Էջմիածին։

Հայրենական պատերազմի յօրեանին տօնը շատ շեղութեամբ կատարվեց նաև Թաւրիզում օգոստ. 25-ին և 26-ին. շաբթի գիշեր հրապարտարանի մատուցում կատարվել է մաղթանք նորին Կայսերական Մեծութեան և Ղնտանիքի արևադարձեան համար. ապա հոգեհանգիստ կատարվեց Ալեքսանդր I կայսրի և այն զորավարների և զինուորների համար, որոնք ընկել են իբրօղիկեան զաշտուէ։ Յաջորդ օրը բանակում տեղի ունեցաւ զօրահանդէս։

Հայկազուն

Նած ջրերը կոհակներ կազմելով յորձանք են տալիս, ափերից դուրս գալիս և փրփրալով, ետալով հեղեղում չորս կողմը։

Ինչ է պատահել, ինչ է պատճառը ճանճի ջրերի լուգմուտքը։

Էջմիածնի վարչութիւնը կօնդակ է ուղարկել իր ստորագրեալներին, որ տառերի գիւտի 1500-անակին և հայ տպագրութեան 400-անակին տօնը ամեն տեղ պէտք է կատարվի հոկտեմբերի 13-ին, Թարգմանչաց տօնի օրը։

Սովորական և շատ հասարակ մի բան։

Էջմիածինը իր վրա է վերցնում համազգային մի տօնը նախաձեռնութիւնը։

Այդ նրա պատիւն էր։

Ես չեմ ասում, ի հարկէ, որ Էջմիածինը ինքնագլուխ իրաւունք ունէր նշանակելու տօնի օրը և նրա ձևը, համազգային Ֆօնդի նպատակը և այլն, որովհետև այդ հարցերի լուծումը ամբողջ ազգին է պատկանում և իրա ներկայացուցիչները որոշմամբ պէտք է լինի Այդ մի ակօրտաւ է, որը պարզ պէտք է լինի ամենքի համար. բայց իրր այդպէս չէ եղել, երբ համազգային տօնի նախաձեռնութիւնը ամեն քաղաքում և ամեն տեղ տարբեր հիմնարկութիւններ և անձնաւորութիւններ են վերցնում իրանց վրա, այդ՝ զէպում ի հարկէ Էջմիածինը ամենից մեծ և կատարելա իրաւունք ունի իր վրա վերցնելու նախաձեռնութիւնը, ի չիք համարելով միւս բոլոր առաջարկութիւնները։

Այդ շատ հակահայել է և պարզ և վիճելու կարիք անգամ չը կայ. բայց տեսէք, որ կան մարդիկ, որոնց դուր չէ գալիս Էջմիածնի այդ իրաւացի կարգադրութիւնը, և կատարած, փրփուր բերաններին նրանք իջեալուտք չէ մտում, որ չը թափեն Էջմիածնի և նրա վարչութեան գլուխներին։

Ե՛լ Էջմիածինը հրամայում է...—ասում են նրանք։

Բայց թող թող տրվի հարցնել նրանք։

Իսկ դուք, պարտուն, մի՞թէ չէք հրամայել։ Մի՞թէ ձեր կողմ հայութեանը տօնել յօրեանները այս-ինչ կոր՛ նոյնպէս մի հրաման չէ, թէ՛ դուք հարծում էք, որ ազգի բերանից կամ նրա անունից էք խօսում։

«40 հաստատութիւնների ներկայացուցիչներ»։

Անձ ձեր արգումենտացիան։

Բայց մի՞թէ ամբողջ հայ ազգը այդ «40» հաստատութիւններից է կախված, կամ նրա բաղղի ստօրէնութիւնը այդ լրջճով 40 հաստատութիւնների ձեռքին է գտնվում։

Այդ ձր օրէնքով։

Ե՛լ Էջմիածինը հրամայում է քո։

Այո, նա հրամայում է, բայց միայն իր ստորադրեալ թեմական առաջնորդներին. իսկ ժողովուրդը, եթէ չը ցանկայ, կարող է և չը մասնակցել։

Ինչ դուք, դուք ուզում էիք հրամայել բովանդակ հայ ազգին, ուզում էիք, որ «45» միլիոն հայութիւնը ենթարկվել ձեր՝ Ե՛լ Էջմիածին 40 հաստատութիւնների ներկայացուցիչներին՝ կապրիզներին ու կարգադրութիւններին։

Եւ որովհետև տարիներ ընթացում հայ ժողովուրդը սարսափների մղձաւանջի տակ կամայ թէ սկսմայ կատարել է ձեր բոլոր պահանջները, ուստի ձեզ ցաւ է պատճառում, որ այսօր են ըմբոստանում է, ծառանում ձեր դէմ։

Այո, դուք կատարում էք, փրփրում, որ Էջմիածինը, որի Գահակալին դուք էք ընտրել, այսօր ձեր կարգադրութիւններին հակառակ է գնում։

Դուք չէիք պատում զբան և հէից այդ է կատարեցնում ձեզ։

Այժմ հնձեցէք ձեր ցանափի պտուղները։

Ինչու էք ուրիշներին մեղադրում երկպառակութիւններ սերմանելու կամ ժողովրդի իրաւունքները ոտնատակ տալու մէջ, քանի որ դուք՝ այդ Ե՛լ Էջմիածին 40 հաստատութիւնների ներկայացուցիչները՝ առաջինը ոտնատակ տուիք ժողովրդի իրաւունքները, որի անունից այսօր ձեռ-մեծ խօսում էք, որովհետև հայ ազգի ներկայացուցիչներ չը լինելով հանդերձ՝ դուք նրա անունից էիք խօսում և նրա անունով ճառում։

Այժմ հանգստացէք և ի գուր մի բորբուզվէք։

Թող Էջմիածնի կարգադրութեամբ յօրեանը տօնեն նոյն. 13-ին հոգևորականութիւնն ու եկեղեցական դասը, իսկ ձեր հրամանով՝ «բովանդակ հայ ժողովուրդը»։

Այսպէս է եղել սկզբից ի վեր և այդպէս էլ կը շարունակվի միշտ։

Հայերի մէջ ամեն մի մեծ գործ և նպատակ ոտնատակ պէտք է տրվի միշտ և ծաղր ու ծանակի առարկայ դառնայ։

Վ. Թումանյան

Բագու

ԵՒՎԱՅ ՇՈՒՇԻ ԵՐԿԱՅՈՒՂԻՆ

Ներկայումս, ինչպէս հարգրում է «Bak» լրագիրը, Եւախ-Շուշի երկաթուղու վերջական նախագիծը արդէն վերամշակված է։ Այդ նախագիծով որոշված է գծի աշխատանքները, հարկաւոր նրխնիները և դրանց վերաբերեալ ծախսերը։

Արողջ գծի երկաթուղիին է 101,9 վերստ։ Լեւոնային մասերում, Շուշու մտակը, զիճը պիտի անցնի Կարկաւ և Դայաուրի գիւղի գետերի ուղղութեամբ՝ կիրճերի միջով սկսած Բալուշա վիւղից մինչև Խալիֆուտ գիւղը (կայսրաց «Մուշի»)։

Վերամշակված նախագիծով՝ որոշված է անցեցանակ լայնութիւնը (широко-колеиная) գիծ, որովհետև պարզվել է, որ նեղուղի գիծը այնքան էլ ձեռնասո չէ, զիխաւորաբար պետական տեսակէտից։

Եւախ-Շուշի ճանապարհը տարեկան պիտի փութաղը 7,265,000 տոնը ապրանք։ Դրա համար և որոշված է ունենայ 3 գոյգ աքրանշատար գնացք։

Գիծը կունենայ հետեալ կայարանները, կհասկայարաններն ու պլասֆորմաները. կայարաններ՝ Եւախ, Թարթառ, Խաչն, Անկաւար, Շուշի. կիսակայարաններ՝ Աղղամ, Բալուշա, Խաչքենդ. պլասֆորմաներ՝ Մարզի, Ախտաւր, Յիջքանակեղաւ։

Գծին վերաբերեալ բոլոր շինութիւնները կը կառուցվեն տեղական քարից, համապատասխան տեղական շինութիւններին՝ խուսափելով ճարտարպետական . ճոխութիւններից, որպէսզի, ինչպէս երևում է, խոշոր և սեւորեղ ծախսեր չը լինեն։

Արողջ գծի ծախքը հաշվում է 3.187,764 բուրլի, սակ է թէ՛ իւրաքանչիւր վերստին 32,266 բուրլի։

Նախագիծով մուտք է նկատի է առնվում տարեկան 455,752 լր, ծախք՝ 266,023 ռու. Այդպիսով՝ դրա օգուտ մնում է 189,729 լր, կամ 6 տոկոս՝ 3,225,000 բուրլի գրասագիւղի։

«Bak» թերթը բերելով այդ տեղեկութիւնները՝ իր կողմից աւելացնում է հետեալը. «Մեղ մնում է միայն ցանկալ, որ այդ երկաթ ժամանակ սպազմով ճանապարհի կառուցմանը ձեռնարկվի ըստ կարելու շուտով»։

Նոյնը կը ցանկայրեք և մենք, ի նկատի ունենալով այդ գծի իրտա կարեւորութիւնը։

ՆՆՈՒՄ ԵՆՈՒՄ

ԸՆԹԵՐՅՈՒՄ ԹԻՇԱՍԱԿԱՐԱՆԻԾ

XXIII

Ճանհը յուզվում է...

Սովորաբար խաղաղ ու անաբժ բորբոս։